

Տնօրեն՝

Հաստատում եմ՝

Պ. Սանթրոսյան

«18» 10 2016թ.

Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ

1. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1.1 Սույն ընթացակարգի գործունեության ոլորտը տարածվում է քոլեջի հաշվապահությանն այն կառուցվածքային ստորաբաժանումների վրա, որոնք ներառվում են ֆինանսների կառավարման համակարգում:

1.2 Ֆինանսների տնօրինման ընթացակարգը որոշում է քոլեջի ֆինանսական ապահովման գործընթացների բովանդակությունը և հաջորդականությունը: Սույն ընթացակարգը սահմանում է տվյալ գործընթացի շրջանակներում իրավասությունների և պատասխանատվությունների բաշխումը:

1.3 Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ֆինանսների տնօրինման քաղաքականությունը նախատեսում է ֆինանսական ռեսուրսների օգտագործումը քոլեջի ռազմավարությամբ սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար:

2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Քոլեջի ֆինանսների կառավարումը և բաշխումն ուղղված ֆինանսների ռազմավարական նպատակների իրականացմանը:

Սույն քաղաքականությունը որոշում է քոլեջի ֆինանսների կառավարման սկզբունքները՝

- Համապատասխանություն (քոլեջի ռազմավարական նպատակներին),
- Ամբողջականություն (գործողությունների իրականացման տրամաբանական շարունակականություն),
- Հստակություն (իրականացման ժամանակահատված, վերահսկում),

Քոլեջի ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են հանդիսանում՝

1. պետական ֆինանսավորումը,
2. ուսանողների վարձավճարները,
3. կրթական վճարովի ծառայությունները,
4. սեփական միջոցները, որոնք գոյանում են ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ և օրենքով չարգելված գործունեության այլ տեսակներից,
5. դրամաշնորհային ծրագրերը,
6. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, դրամաշնորհները,
7. համայնքային բյուջեները:

3.ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ֆինանսների տնօրինումն իրականացվում է որոշակի փուլերով՝

Պլանավորում- Քոլեջի ֆինանսական պլանավորման հիմքում ընկած է քոլեջի ռազմավարական նպատակները և խնդիրները: Ֆինանսական պլանավորումը ներառում է քոլեջի բոլոր եկամուտների և ֆինանսական միջոցների ծախսման ուղղությունների պլանավորումը՝ քոլեջի զարգացման ապահովման համար:

Ֆինանսական պլանավորումը ուղղված է հետևյալ խնդիրների լուծման համար՝

- Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործում
- Ֆինանսական հոսքերի օպտիմալ կառավարում:

Ռեսուրսների ապահովում- Քոլեջի ֆինանսական ռեսուրսների ապահովումն իրականացվում է ըստ հետևյալ քայլերի՝

- Նախնական բյուջեի պլանի կազմում պատասխանատու անձանց կողմից,
- Ռեսուրսների օգտագործման ուղղությունների որոշում

Բյուջեի հաստատում և իրականացում:

Քոլեջի բյուջեն կազմվում է տարեկան կտրվածքով, պլանավորվում և ներկայացվում է քոլեջի կառավարման խորհրդին՝ քննարկման և հաստատման :

Բյուջեի փաթեթը պատրաստում են տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից և

բաշխվում ըստ քոլեջի կողմից իրականացվող հիմնական ֆինանսական ապահովման գործառույթների:

Ռեսուրսների բաշխում և կառավարում- Ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացվում է նախապես կայացված որոշումների և քոլեջի ռազմավարական գերակա ուղղությունների հիման վրա:

Քոլեջի ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- աշխատավարձ,
- ուսումնական գործընթաց /կրթական ծառայություններ,
- պետական բյուջեի վճարումներ,
- ընթացիկ ծախսեր՝ քոլեջի նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով:

Ռեսուրսների բաշխումը իրականացվում է վարչատնտեսական գծով փոխտնօրենի և պահեստապետի կողմից՝ համապատասխան ստորաբաժանումների պահանջագրերի հիման վրա:

Ֆինանսական հաշվետվությունը պետք է պատրաստ լինի առնվազն հաշվետու տարվա ավարտին, և ապահովի հետևյալ դրույթները՝

- բյուջեի փաստացի ֆինանսական ցուցանիշների նախատեսում,
- բոլոր եկամուտների և ծախսերի աղբյուրների ներառում,
- տարեվերջյան մնացորդների կանխատեսում:

Ֆինանսական տարվա ամփոփում պետք է իրականացնել հետևյալ նպատակներին հասնելու համար և ներկայացնել կառավարման խորհրդի հաստատմանը

Փաստել՝

- ծախսերն արդյունավետ են և անհրաժեշտ նպատակներին հասնելու համար,
- ռեսուրսներն օգտագործվում են արդյունավետ,
- առկա են բավարար ռեսուրսներ աշխատանքները շարունակելու համար,
- իրականացնել կրթական միջավայրի փոփոխությունների բացահայտում:

Վերոնշյալ արդյունքների հիման վրա է կազմվում հաջորդ ֆինանսական տարվա գործունեությունը (նախահաշիվը):

Պատասխանատվություն- Ֆինանսական համակարգի մշակման, ներդրման և կառավարման համար պատասխանատվություն են կրում քոլեջի տնօրենը, հաշվապահությունը և այն կառուցվածային ստորաբաժանումները և անձինք, որոնք պատասխանատու են տվյալ գործընթացի կազմակերպման և իրականացման համար: